ԶԵԿՈՒՅՑ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԻՀԿ

ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ԵՎ 13-ԻՆ ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

զեկուցող՝ «ՈՔՎԿ» ԻՀԿ Նախագահ, ինքը և ՆԳ Նախարարին կից հասարակական խորհրդի և Կարգապահական հանձնաժողովի անդամ Մ. Ա. Ավետիսյան

ԳՅՈՒՄՐԻ - 2025

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ

ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 17 ԴՈՍ , 1/9 3109, Շիրակ, ՀՀ
+374 44 034 034 / mail@ncsarmenia.am

ԶԵԿՈՒՅՑ

«ՈՔՎԿ» ԻՀԿ-ն 2025 թվականի հունվարի 12-ին և 13-ին իրականացված ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի տրանսպորտային միջոցների համար նախատեսված վառելիքի ստուգումների վերաբերյալ:

Ստուգումներին մասնակցել են Հիմնադրամի Գործադիր տնօրեն Մ. Ավետիսյանը, ՊԾ ԼՄ գումարտակի հրամանատար Կ. Կուրեղյանը, ՊԾ ՇՄ գումարտակի հրամանատար Լ. Մարտիրոսյանը:

Ստուգման են ներկայացվել 2024 թվականի 1-ին, 2-րդ , 5-րդ, 6-րդ, 8-ից 12-րդ ամիսների հաշվետվությունները, ինչպես նաև 5-րդ, 6-րդ, 8-ից 12-րդ ամսիների բենզալցակայաններում առկա մատյանների պատճենները, որոնցում արտացոլված է ծառայողական տրանսպորտային միջոցի կողային համարը, լիցքավորման օրը (որոշակի դեպքերում նաև՝ ժամը) , պարեկային ծառայողի կրծքանշանի համարը և ազգանունը, ինչպես նաև ստորագրությունը:

Ստուգումների արդյունքում արձանագրվել է, որ տվյալ մատյանները հաշվառված չեն, չեն կրում իրավաբանական ուժ, սակայն ներառում են վառելիքի լիցքավորման առավել ճշգրիտ տվյալներ:

Վառելիքի ծախսի ստուգումը իրականացվել է պատահական ընտրված ծառայողական տրանսպորտային միջոցների մասով, համեմատելով մի քանի տվյալ՝ ՊԾ ՇՄ գումարտակում առկա և պահպանված՝ բենզալցակայանից ստացված մատյանի պատճենը, հաշվետվությունը և էլեկտրոնային հաշվետվությունը:

Ստուգվել են մասնավորապես **2115** կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցի *օգոստոս*, *նոյեմբեր* և *դեկտեմբեր*, **2138** կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցի *հոկտեմբեր*, **2071** կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցի *մայիս*, **2074** կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցի *մայիս* ամիսների լցակայանում առկա մատյանների և առկա հաշվետվությունների և էլեկտրոնային ֆայլերում ներառված տվյալները, *ըստ որի* նկատվել է

2115 ծառայողական տրանսպորտային միջոցի մասով օգոստոս ամսին 20 լիտր տարբերություն, մասնավորապես ըստ հաշվետվության վերոնշյալ ծառայողական տրանսպորտային միջոցը հաշվարկային ամսում լիցքավորվել է **280** լիտր բենզին, իսկ ըստ ՊԾ ՇՄ գումարտակում առկա և պահպանված՝ բենզալցակայանից ստացված մատյանի պատճենի լիցքավորվել է **260** լիտր, **նույն կողային համարով** ծառայողական տրանսպորտային միջոցը *հոկտեմբեր* ամսին *ըստ* հաշվետվության լիցքավորվել է **300** լիտր, իսկ ըստ ՊԾ ՇՄ գումարտակում առկա և պահպանված՝ բենզալցակայանից ստացված մատյանի պատճենի հաշվետու ամսում ծառայողական տրանսպորտային միջոցը լիցքավորվել է **260** լիտր:

Հարկ ենք համարում արձանագրել, որ *հոկտեմբեր* հաշվարկային ամսում **2138** կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցը ըստ ՊԾ ՇՄ գումարտակում առկա և պահպանված՝ բենզալցակայանից ստացված մատյանի պատճենից ստացված տվյալների լիցքավորվել է **1076** լիտր, իսկ նույն ժամանակահատվածի հաշվետվությամբ՝ **1066** լիտր:

2071, 2074 կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցների *մայիս* ամսվա ստուգումներում տարբերություններ չեն հայտնաբերվել:

Հիմնվելով վերոշարադրյալ փաստերի համադրմամբ՝ արձանագրվել է հետևյալը.

- 2024 թվականի **օգոստոս** ամսին առկա է **առնվազն 20 լիտր** բենզինային վառելիքի տարբերություն՝ մեկ ծառայողական տրանսպորտային միջոցի մասով
- 2024 թվականի **հոկտեմբեր** ամսին առկա է **առնվազն 30 լիտր** տարբերություն՝ 2 ծառայողական տրանսպորտային միջոցների (2115 և 2138)ընդհանուր հաշվարկման մասով
- 2024 թվականի **մայիս** ամսին ստուգվել է **2 մեքենա**, որոնց մասով տարբերություն **չի արձանագրվել:**
- 2024 թվականի ***հունվար և փետրվար ամիսներին առկա չեն եղել մատյաններ՝ համապատասխան ստուգումներ իրականացնելու համար:***
- Գումարտակի հրամանատարի տեղակալի, ծառայության և տեխնիկայի գծով տեսուչների, և այլ վարչական աշխատողներին տրամադրված վառելիքը հնարավոր չի եղել ստուգել, ***քանի որ նշյալ ծառայողները չեն լրացրել մատյան, չեն ունեցել ստուգման համապատասխան գրաֆիկ, ըստ որի կկատարվեր համեմատություն:***
- Միաժամանակ ստուգումներով արձանագրված՝ 2115 և 2138 կողային համարով ծառայողական տրանսպորտային միջոցների մասով հայտնաբերված 20, 40 և 10 լիտր բենզինի տարբերությունը արձանագրվել է , որպես տեխնիկական վրիպակ՝

- բենզալցակայանից ստացված և առկա մատյանների թվայնացման գործընթացում, ինչի առնչությամբ Հիմնադրամը հանդես է եկել առաջարկությամբ:

Վերլուծելով վերոնշյալ խնդիրները «ՈՔՎԿ» ԻՀԿ-ն առաջարկում է

- Գործարկել էլեկտրոնային մատյան, որտեղ պարեկային ծառայողն օնլայն ռեժիմում կլրացնի լիցքավորված լիտրը, տվյալ պահին ծառայողական տրանսպորտային միջոցի կիլոմետրաժը, ըստ որի ինքնաշխատ եղանակով կգենարացվի հաշվետվությունը:
- Գումարտակի հրամանատարի տեղակալի, ծառայության և տեխնիկայի տեսուչների կողմից տրանսպորտային միջոցների լիցքավորումը ևս կատարել լցակայաններում առկա մատյանների միջոցով, բացառելով գումարտակի հրամանատարի կողմից վառելիքի կտրոնների կամայական տրամադրումը ենթականերին, բացառությամբ Երևան կամ այլ մարզ գործուղվելու, որի դեպքում ստացականով կտրամադրվի կտրոնը, ինչպես նաև կնշվի նպատակը:
- Մինչ վերոնշյալ էլեկտրոնային մատյանի գործարկումն առաջարկում ենք ունենալ մեկ միասնական մատյանի ձևաչափ(համաձայն Հավելված 1-ի), որը կգրանցվի, կունենա հաշվառում, էջերը կապարակնքված կլինեն, ինչպես նաև կսահմանավի մատյանի պահպանման ժամկետը՝ առնվազն 2 տարի:

Զեկուցող՝ Մ. Ա. Ավետիսյան

Կ.Տ.

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ

Հավելված 1 (ձևանմուշ)

ՊԾ ՇՄ X վաշտ, x դասակ

հունվար

Օր	Ժամ	Կողային համար	Լիտր	Կրծքանշանի համար	Ազգանուն	ստորագրություն

Ընդհանուր՝ _____ լիտր

ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 17 ԴՈՍ , 1/9 3109, Շիրակ, ՀՀ
+374 44 034 034 / mail@ncsarmenia.am